

Ես աշխատել եմ յատուկ անունները ժողովրդի—ազգաբնակութեան արտասանած ձայներով արձանագրել. պէտք է յայտնեմ, որ Ութիի, մանաւանդ Թորդումի բնիկ հայերը ամէնից ճիշտ էին արտայայտում անունները: Ութիի Լեսփէկ վիճակի, Լեսփէկ գիւղում, երբ ես մուրում կրկին ու կրկին հարց էի տալիս ծերուկին, որ ինձ առաջնորդում էր, նա ասաց, «Լեսփէկ» չէ, այլ «Լուսփակ», չե՞ս տեսնում—Լուսը փակւել, կապւել է, բարձր սարերը փակել էին լուսի ճանապարհ: Կարսի նահանգական տարեցոյցը Լեսփէկ էր ցոյց տալիս, ես չէի կարող երեւակայել, որ պաշտօնէութիւնը գիտութեամբ կամ անփոյթ կերպով Լուսփակը—Լեսփէկ է շինել: Թէ Կովկասի գինուորական քարտէզի վերայ, ինչպէս 1872, նոյնպէս 1902 թ. տպւած է «Լեսփէկ». Southampton-ի մէջ 1919 ի. անգլիերէն տըպագրւած քարտէզի վրայ նոյնպէս Լեսփէկ է տպագրւած թէ լեռը, թէ գեղը եւ թէ պոստը. ուստի ես գրեցի Լոյստակ կամ Լուսփակ. այսպէս եւ բազմաթիւ անուններ: Բալախոռ եւ Բայբուրդ անձամբ չեմ եղել. բայց օգտւելով Ռուսակ. Կովկասի գինուորական շտաբի հրատարակած Пржевальский-ի եւ Колюбакин-ի գործերից, որոնք ուսումնասիրել են ինչպէս լեռները, նոյնպէս եւ գետերն ու վտակները: Գործածւած բոլոր թւերը ես վերցրել եմ յիշեալների